

**,Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանումն ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

Ծրագրի անվանումը	Հանրային վերահսկողության մեխանիզմների հզորացում Արարատի մարզում
Դիմող կազմակերպության անվանումը	„ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿԱՆԱԶՆԵՐ,, ՀԿ
Կոնտակտային անձ և կոնտակտային կայներ	Հասմիկ Խաչատրյան hasmikstudio@mail.ru, /093/ 24.22.22 alinaglalyan@mail.ru /094/ 48.15.04
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, մայր)	ՀՀ, Արարատի մարզ
Ծրագրի տևողությունը	2 ամիս
Ծրագրի հակիրճ նկարագրիրը	<p>Ծրագրի նպատակն է՝ հանրային իրազեկման և վերահսկողության միջոցով նպաստել Արարատի մարզի ծննդատներում առկա կոռուպցիոն ռիսկերի և չարաշահումների նվազեցմանը:</p> <p>Խնդիրներն են.</p> <ul style="list-style-type: none"> - Խթանել քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը հանրային վերահսկողություն իրականացնելու գործընթացներում, ներգրավելով գյուղական համայնքների 4 երիտասարդի (նաև երիտասարդ կանանց) - Նպաստել գյուղական համայնքների երիտասարդների (հատկապես երիտասարդ կանանց) քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ նրանց ներգրավելով հանրային դիտորդման, 50 ծննդաբերածների հետ մոնիտորինգի և հանրային վերահսկողության գործընթացներում: - Բարձրացնել հանրային իրազեկման մակարդակը՝ պետության կողմից երեշխավորվող անվճար ծննդօգնության, ինչպես նաև մորը և մանկանն ուղված առողջապահական ծրագրերի վերաբերյալ: - Աջակցել հիվանդատիքոջ և բուժանձնակազմի շփումների նվազեցմանը դարձնել փակ հիմնարկ, որը ճիշտ է, ինչպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, այնպես էլ հիգիենիկ և հակահամաճարակային տեսանկյունից: - Անվճար ծառայությունների վերաբերյալ հայտարարություններ տեղադրել ք. Արտաշատի և ք. Մասիսի բնակչությանը մատչելի վայրերում: - Խորհրդատվության տրամադրում հղիներին և ծննդաբերածներին անվճար ծննդօգնության վերաբերյալ:
ԲՀԱ-ից պահանջվող Գումարի չափը	660000
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	750000
Ծրագրի գործընկեր ականակերպությունը (եթե առկա է)	„ Արարատ քաղաքի կանանց խորհուրդ,, Հ/Կ

Դիմող կազմակերպության/նների նկարագրություն *(առավելագույնը կես էջ)*

«Արարատի մարզի Կանաչներ» հասարակական կազմակերպությունը մարզում գործունեություն է ծավալում 1999 թվականից, իրավաբանական ձևակերպումը ստացել է 2003 թվականից: Կազմակերպությունն ունի համայնքների ներգրավման, ծրագրերի իրականացման, ինչպես նաև իրականացված ծրագրերի մշտադիտարկման իրականացման փորձ, ինչպես մարզի քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքներում: Կազմակերպության նպատակն է. նպաստել գոյապահպանական մտածողության դաստիարակմանը, իրավապաշտպան, բնապահպանական, հակակոռուպցիոն գործունեության ոլորտներում մշտադիտարկման, հետազոտությունների, հանրային վերահսկողության իրականացման, իրավական ոլորտի լուսաբանման, ինչպես նաև բնապահպանական հարցերի լուծմանը և էկոլոգիական աղետների կանխմանն աջակցելու միջոցով:

TASIS ծրագրի իրականացման գործընկերն է հանդիսացել մարզում՝ Կովկասի ռեգիոնալ էկոլոգիական կենտրոնի կողմից հայտարարված ՇՄՏԳԾ-ի շրջանակներում ծրագրեր իրականացնելով Արարատ քաղաքում: ԱԱՊԲ ծրագրի շրջանակներում մարզի 9 համայնքներում մարզի 9 համայնքներում կազմակերպությունը հիմնել է համայնքային առողջապահական կենտրոններ՝ ՀԱԿ-եր :

Բազմաթիվ հանրային ակցիաների հեղինակ է (Տրանսպորտային միջոցների թունավոր արտանետումների դեմ, Վայրի բնության պահպանության, ծառատնկման և այլն) : Կազմակերպվել են հանրային իրազեկման հանդիպումներ , հետազոտություններ, հանրային լսումներ , մշտադիտարկումներ , շահերի պաշտպանության , ինչպես նաև հանրային իրազեկման արշավներ հակակոռուպցիոն գործունեության ոլորտներում՝ Արարատ քաղաքի և հարակից գյուղական համայնքների բնակչության համար , հատկապես բնակչության առողջապահական խնդիրների ուղղությամբ:

Ծրագրի նկարագրություն *(առավելագույնը երկու էջ)*

(Խնդրում ենք ներկայացնել խնդրի համառոտ վերլուծությունը, նկարագրել ծրագրի նպատակները և ինչպե՞ս էք նախատեսում հասնել այդ նպատակներին: Նշեք, ովքե՞ր են ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, ինչ մեթոդաբանություն է կիրառվելու, և որո՞նք են ակնկալվող արդյունքները և ազդեցությունը)

Արարատի մարզի 4 բժշկական հաստատություններում՝ «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ, «Մասիսի ԲԿ» ՓԲԸ, «Վեդու ԲԿ» ՓԲԸ և «Արարատի հիվանդանոց ԲԿ» ՓԲԸ, գործում են ծննդաբերական բաժանմունքներ: Մարզում գործում են 4 բժշկական կենտրոն, 1 ծննդատուն, 49 բուժամբույլատորիա:

Հավաստագրերի ներդրումից հետո վերջին 3 տարիների ընթացքում մարզի 9664 հղիներին տրամադրվել են հավաստագրեր, մարզի ծննդատներում ծննդաբերել են 7523-ը, հանրապետության այլ վայրերում 2141 հղի : Հղիների արտահոսք առկա է Մասիսի և Արտաշատի տարածաշրջաններից, որը բացատրվում նյութատեխնիկական բազայի վատ հագեցվածությամբ և Երևան քաղաքին մոտ գտնվելու հանգամանքով: Ընդհանուր առմամբ հավաստագրերի ներդրումից հետո մարզից հղիների արտահոսքը հիմնականում Երևան քաղաքի տարբեր կլինիկաներ պակասել է:

Ըստ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ընտանիքները՝ երեխաները, ընդգրկում են դրամական ու ոչ դրամական, առողջապահական օժանդակության ծրագրում՝ կապված հղիության, ծննդաբերության, որդեգրման, երեխաներին մեծացնելու ինչպես նաև ընտանիքների ու երեխաների սոցիալական օժանդակության և պաշտպանության հանգամանքներից:

Քանի որ նշյալ տեղեկատվությունը մատչելի է ոչ բոլորին՝ հանգեցնում է կոռուպցիոն ռիսկեր:

Արարատի մարզի հիվանդանոցների ծննդաբերական բաժանմունքների և ծննդատան կողմից տրամադրված ծառայությունների, ինչպես նաև նշյալ հաստատություններում պետության և միջազգային զարգացման գործակալությունների կողմից ներդրումային ծրագրերի արդյունքների հանրային դիտարկման միջոցով վեր կհանվեն առկա կոռուպցիոն ռիսկերը, կկազմվի համապարփակ հաշվետվություն և կներկայացվի հանրային քննարկման:

Ծրագրի նպատակն է՝ հանրային իրազեկման և վերահսկողության միջոցով նպաստել **Արարատի մարզի ծննդատներում առկա կոռուպցիոն ռիսկերի և չարաշահումների նվազեցմանը:**

Խնդիրներն են.

- Նպաստել գյուղական համայնքների երիտասարդների (հատկապես երիտասարդ կանանց) քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ նրանց ներգրավելով հանրային դիտորդման և հանրային վերահսկողության գործընթացներում:
- Բարձրացնել հանրային իրազեկման մակարդակը՝ պետության կողմից երեշխավորվող անվճար ծննդօգնության ինչպես նաև մորը և մանկանն ուղղված առողջապահական ծրագրերի վերաբերյալ:

Քայլերը.

- Խթանել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը հանրային վերահսկողություն իրականացնելու գործընթացներում՝ իրականացնելով գյուղական համայնքների շուրջ 4 երիտասարդի ներգրավել ՀՀ կառավարության գործող ծրագրի հակակոռուպցիոն ասպեկտների, ՀՀ գործող հակակոռուպցիոն ռազմավարության և դրանց գործողությունների միջոցառումների իրականացման, ինչպես նաև հանրային վերահսկողություն իրականացնելու մեխանիզմների և գործիքների վերաբերյալ գործընթացում:
- Ծանոթացնել հակակոռուպցիոն հանրային վերահսկողության մեթոդներին և գործիքներին:
- Ձևավորել ակտիվ երիտասարդների թիմ, ովքեր կներգրավվեն հանրային վերահսկողության աշխատանքներում:
- 2 առողջապահական հաստատություններում ծննդօգնություն ստացող մոտ 50 կանանց շրջանում տարածել տեղեկատվական թերթիկներ և իրականացնել իրազեկման աշխատանքներ:
- Գյուղական համայնքներում ապրող 18-40 տարեկան կանանց շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ և տարածել տեղեկատվական անանուն թերթիկներ:
- Կազմել դիտարկումների ամփոփ հաշվետվություն՝ ներկայացնելով շահագրգիռ գործընկեր կառույցներին:

Ժամանակացույց

(Խնդրում ենք ներկայացնել ծրագրի ժամանակացույցը՝ հետևելով առաջարկվող աղյուսակին: Անհրաժեշտության դեպքում կարող էք ավելացնել լրացուցիչ տողեր:)

Շաբաթ	Գործողություն
1-ին և 2րդ	Աշխատակազմի հետ պայմանագրերի և աշխատանքային պարտականությունների տակեցում: Աշխատանքային մանրամասն ժամանակացույցի կազմում:
2-րդ	Տեղեկատվական հանդիպումների ծրագրի և հարցաթերթերի կազմում, ադապտացում թիրախ լսարանին և մարզի առանձնահատկություններին: Թիրախ լսարանի հավաքագրում (կապ գյուղապետարանների և համայնքային հասարակական կազմակերպությունների միջոցով):
2-րդ	Ներգրավել ակտիվ երիտասարդներին՝ Արարատի մարզի գյուղական համայնքներից:
3-րդ	Հակակոռուպցիոն հանրային վերահսկողության մեթոդներին և գործիքներին ծանոթացման նպատակով՝ երիտասարդ կանանց ներգրավել:

3-րդ և 4-րդ	Ձևավորել ակտիվ երիտասարդների թիմ, ովքեր կներգրավվեն հանրային վերահսկողության աշխատանքներում:
4րդ-6րդ	2 առողջապահական հաստատություններում ծննդօգնություն ստացող մոտ 50 կանանց շրջանում տարածել տեղեկատվական թերթիկներ և իրականացնել իրազեկման աշխատանքներ:
4-րդ-6րդ	Գյուղական համայնքներում ապրող 18-40 տարեկան կանանց շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ և տարածել տեղեկատվական անանուն թերթիկներ:
7-րդ	Փաստաթղթային ուսումնասիրություն, դիտարկում
8-րդ	Հաշվետվության տարածում սոցիալական ցանցի, ՁԼՄ-ների և պաշտոնական կայքերի միջոցով
1-8-րդ	Մասիսի և Արտաշատի բժշկական կենտրոնների ծննդատներում անցկացնել դիտարկում, մոնիտորինգ 50 հղիների և ծննդաբերածների հետ
8-րդ	Դիտարկումների արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում, տպագրություն 20 օրինակ:
8-րդ	Ծրագրի արդյունքների ամփոփում , շնորհանդեսի կազմակերպում :

Այլ տեղեկատվություն

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել էք սույն ծրագիրը և ձեր դիմումի կարգավիճակը
Որևէ այլ կազմակերպության նշյալ հայտը չի ներկայացվել:

„ Արարատ քաղաքի կանանց խորհուրդ, Հ/Կ

Վերջին երեք տարիներին կազմակերպության կողմից իրականացված ծրագրերի ցանկ

#	Ծրագրի անվանումը	Ֆինանսավորող կազմակերպություն	Ծրագրի արժեքը	Ծրագրի մասնակախատվածը
1				
2				
3				

Ծրագրի առաջարկը պետք է ստորագրված լինի ՔՀԿ-ի ղեկավարի կամ ծրագրի ղեկավարի կողմից և կնքված լինի ՔՀԿ-ի կնիքով:

Դրամաշնորհային հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկ

1. ՔՀԿ (ների) և ՁԼՄ-ների կանոնադրության պատճենը.
2. ՔՀԿ (ների) և ՁԼՄ-ների պետական գրանցման վկայականի պատճենը՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները.
3. ԻՀԱ-ի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ուսուցումների մասնակցության վկայականի պատճենը.
4. հարկ վճարողների հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը.

5. Բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկություն՝ հաստատված բանկի կողմից (անհրաժեշտության դեպքում հաղթող ճանաչված հայտատուները պետք է ներկայացնել նաև քաղվածք բանկից).

6. ծրագրի հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները,

7. եթե ծրագրի ղեկավարը ՔՀԿ-ի ղեկավարը չէ, ապա ՔՀԿ ղեկավարի կողմից ծրագրի ղեկավարին տրված լիազորագիրը.

8. Պարտավորագիր-նամակներ՝ համատեղ ներկայացվելիք ծրագրերի դեպքում: